

սա ոտքիս տակ եւ իւր դիակը դարձեալ ձեզի պէս անպիտաններու չեմ տար, եթէ տասնապատիկ նան աւելի լինին:

Սրահը ընդարձակ էր բաւական. մէկ կողմը տասը-տասներկու յոյսք կանգնած էին սուտերամերկ, եւ միւս կողմը Գուրգէն իր երկու բարեկամներով ու Վահրիճ Նոյնպէս սուտերամերկ, Թեոփիլոս երեսի վրայ պառկած հսկային ոտքին տակ, որ կռնակին վրայ կոխել էր, հագիւ թէ շունչ կառնուր, եւ երեսները կապտեր էին ու քունքերուն եւ վզին երակները ուռած խղդուելու մօտ էր:

— Մեռա՛յ, մեռա՛յ, աղատեցէ՛ք զիս,— կ'ըսէր:

— Եթէ ազատիլ կ'ուզես, հրամայէ՛ քու մարդոցդ զենքերը ձգես եւ դուրս ելնես:

— Պահապանք, դուրս ելէք:

— Խարդա՛խ յոյն, զենքերը ձգել մի՛ մոռնար:

Այս միջոցիս պահապաններէն մէկը սիրտ ըրաւ եւ սուրը ձեռքը յանկարծ յարձակեցաւ Գուրգէնի վրայ, իսկ սա՝ որուն աչքը շարժմունք մը չէր կորուսած, դեռ մարդը իրեն չի հասած այնպիսի ոտքի հարուած մը տուաւ փորին, որ խեղճը իւր սուրը ձեռքը վեր թռաւ մարդաչափ բարձրութեամբ եւ պտոյտ մը ընելով օդին մէջ դիակի մը պէս ինկաւ մնաց: Իսկ Թեոփիլոս իր խղդուկ ձայնովի

— Ձգեցէ՛ք զենքերը, դուրս ելէ՛ք, մեռա՛յ, ո՛հ...

Սուրերը թողին պահապանք եւ դուրս ելան, դռան քով լցուեցան:

— Վահրիճ, սուրերը ժողուէ, սա յիմար դիակն էլ դուրս քաշել տուր ընկերներուն,— ըսաւ Գուրգէն եւ ոտքը վերուց Թեոփիլոսի վրայէն, որ՝

— Մեռա՛յ, մեռայ,— կ'ըսէր մարած ձայնով: